Երեկույթին մասնակցում էին Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի Նախագահության նախագահ, ակադեմիկոս Ն. Հարությունյանը, ՀԿՊ Կենտկոմի քարտուղար Գ. Հարությունյանը և ուրիշներ։

ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՅՈԹԱՆԱՍՈՒՆԱՄՅԱԿԸ

Մեր հանրապետության գիտական հասարակայնությունը հանդիսավորությամբ նշեց Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, Երևանի պետական համալսարանի ՍՍՌՄ պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Վահան Ռշտունու ծննդյան 70 և գիտա-մանկավարժական գործունեության 50-ամյակը։

Դժվար, պատմական իրադարձություններով լի, միևնույն ժամանակ կյանքի ու գործունեության բեղմնավոր ուղի է անցել անվանի գիտնականը։

Վ. Հ. Ռշտունին ծնվել է 1894 թ. Վաղարշապատում (այժմ Էջմիածին) Արևմտյան Հայաստանից գաղթած գյուղացի արհեստավորի ընտանիքում։ 1904—1915 թթ. նա սովորում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում։ Այդ տարիներին էլ նա ծանոթանում է մարքսիզմի ուսմունքին, մասնակցում ուսանողական հեղափոխական ցույցերին։ Նա ճեմարանի այն ուսանողներից էր, որոնք ընդվզում էին կղերական գաղափարախոսության դեմ։

Ճեմարանը հաջողությամբ ավարտելուց հետո ծավալվում է երիտասարդ Ռշտունու մանկավարժական բեղմնավոր գործունեությունը՝ սկզբում Պարսկաստանի Թավրիզ քաղաքում, ապա Ախալցիխայում, Սուխումիում, Թբիլիսիում։ Միաժամանակ Վ. Ռշտունին 1919—1924 թթ. սովորում է Թբիլիսիի պոլիտեխնիկական ինստիտուտի հասարակական գիտությունների ֆակուլտետում և հաջողությամբ ավարտում այն։

1924 թ. սկսվում է Վ. Հ. Ռշտունու կյանքի և գործունեության նոր շրջանը։ Վերադառնալով Հայաստան, նա դասավանդում է Երևանի կուսակցական դպրոցում, իսկ այնուհետև սկսում է դասախոսական աշխատանք կատարել Երևանի պետական համալսարանում, որտեղ և ծավալվում է նրա բազմամյա գիտա-մանկավարժական գործունեությունը։

Շուրջ քառասուն տարի է, ինչ Վ. Ռշտունին Երևանի պետական համալսարանի ուսանողների սիրված դասախոսն է, կադրերի այդ դարբնոցի հմուտ դարբինը։ Համալսարանի կամարների տակ նա դաստիարակել, աճեցրել է հարյուրավոր մասնագետների, որոնք ինչպես մեր հանրապետությունում, այնպես էլ մեր հայրենիքի տարբեր ծայրամասերում լծվել են կոմունիստական հասարակության կառուցման վեհ գործին։

Միշտ ծիծաղկոտ, միշտ ժպտադեմ, միշտ կայտառ ու խոհուն, պահանջկոտ ու բարի, այդպիսին գիտեն անվանի գիտնականին բոլոր ուսանողներն ու դասախոսները։

Վաստակավոր գիտնականը Երևանի պետական համալսարանում առաջինը մշակեց ու կարդաց ՍՍՌՄ պատմության համալսարանական կուրսը, դառնալով ՍՍՌՄ պատմության ամբիոնի հիմնադիրը և մշտական դեկավարը։ Բացի համալսարանից, նա այդ տարիներին ՍՍՌՄ պատմության կուրսի դասավանդումը ստանձնել է նաև Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում և ՀԿՊ Կենտկոմին կից երկամյա կուսակցական դպրոցում։

Պետական համալսարանում Վ. Ռշտունին վարել է մի շարք դեկավար պոստեր պատմա-տնտեսագիտական և պատմության ֆակուլտետի դեկան, ուսումնական մասի վարիչ, գիտական աշխատողների սեկցիայի պատասխանատու քարտուղար։

Պրոֆեսոր Ռշտունին մանկավարժական բեղմնավոր գործունեության հետ միաժամանակ զբաղվում է գիտահետազոտական աշխատանքներով։ Նրա գիտական գործունեությունը ծավալվում է հատկապես Արմֆանի և Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հիմնադրումից հետո։ 1940 թ. Արմֆանի պատմության ինստիտուտում հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա «Հայ հասարակական հոսանքները և 1861, 1864, 1870 թթ. գյուղացիական ռեֆորմները» թեմայով։ Մեկ տարի հետո, Մոսկվայում՝ ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում պաշտպանում է դոկտորական դիսերտացիա՝ «Գյուղացիական ռեֆորմը Հայաստանում 1870 թ.» թեմայով։ 1956 թվին պրոֆեսոր Ռշտունին ընտրվում է Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ։

Համալսարանում և գիտությունների ակադեմիայում Վ. Ռշտունու կատարած գիտահետազոտական աշխատանքները կայուն տեղ են գրավում սովետահայ պատմագրության մեջ։ Նա հատկապես մեծ ավանդ է ներդրել հայ ժողովրդի XIX—XX դարերի պատմության մի շարք

չլուսաբանված պրոբլեմների մշակման գործում։ Գիտնականը սովետահայ պատմաբանների շարքում առաջիններից մեկն էր, որ գլխավոր ուշադրությունը բևեռեց Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների լուսաբանմանը։

Պրոֆեսոր Վ. Հ. Ռշտունու գրչին են պատկանում «Ֆեոդալական հարաբերությունները Արևելյան Հայաստանում Ռուսաստանին միանալու նախօրյակին», «Գյուղացիական ռեֆորմը Հայաստանում 1870 թվին», «Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության», «Գյուղացիական շարժումները Հայաստանում XIX դ.», «Ցարիզմի ագրարային քաղաքականությունը և գյուղացիական շարժումները Հայաստանում XIX դարի երկրորդ կեսին», «Հասարակական հոսանքների պատմությունից XIX դարի ետռեֆորմյան շրջանում», «Անդրկովկասի կապիտալիստական զարգացման սոցիալիստական քննադատությունը XIX դարի 80-ական թվականներին», «Վրաստանում, Ադրբեջանում և Հայաստանում ցարիզմի ագրարային քաղաքականության պատմությունից», «Գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի զարգացման ուղիների հարցը Անդրկովկասում» և այլ աշխատություններ, որոնք արժեքավոր ներդրում են սովետահայ պատմագրության մեջ։ Նա հեղինակ է մոտ 40 անուն գիտական և գիտա-մասսայական աշխատությունների։

Վ. Հ. Ռշտունին իր գիտա-մանկավարժական և հասարակական ակտիվ գործունեությամբ նպաստել է հանրապետությունում գիտա-մանկավարժական բարձրորակ կադրերի պատրաստմանն ու աճեցմանը։ Նա համալսարանի պատմության գծով ասպիրանտուրայի հիմնադիրներից մեկն է, ղեկավարել ու աճեցրել է տասնյակ ասպիրանտներ։ Բավական է ասել, որ նա եղել է թեկնածուական ավելի քան 50 և դոկտորական 10 դիսերտացիաների ընդդիմախոս։

Մեր կուսակցությունը և սովետական կառավարությունն ըստ արժանվույն են գնահատել պրոֆեսոր Ռշտունու ծառայությունները։ Նա պարգևատրվել է Լենինի շքանշանով, արժանացել գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչմանը, 70-ամյակի առթիվ պարգևատրվել ՀՍՍՌ Գերագույն սովետի պատվոգրով, երկու անգամ ընտրվել է Երևանի քաղաքային սովետի դեպուտատ։

Անվանի գիտնականը չնայած իր պատկառելի տարիքին, եռանդով ու սիրով շարունակում է գիտա-մանկավարժական աշխատանքը, մեծ ավանդ ներդնում հայրենի գիտության էլ ավելի զարգացման վեհ գործում։

* * *

Երևանի պետական համալսարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ համալսարանի և ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի միացյալ հոբելյանական երեկո՝ նվիրված պրոֆեսոր Վ. Հ. Ռշտունու ծննդյան 70 և գիտա-մանկավարժական գործունեության 50-ամյակին։

Երեկոն ներածական ճառով բացեց համալսարանի ռեկտոր, կենսաբանական գիտությունների դոկտոր Հ. Բատիկյանը։

Վ. Հ. Ռշտունու կյանքի և գիտամանկավարժական գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ համալսարանի պատմության ինստիտուտի դեկան Ռ. Մովսիսյանը։

Մեծավաստակ գիտնականին առաջինը ողջունեց Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի բարձրագույն և մասնագիտական կրթության կոմիտեի նախագահ Գ. Հայրյանը։

Գիտությունների ակադեմիայի նախագահության ողջույնը՝ ուղղված պրոֆեսոր Վ. Հ. Ռշտունուն հրապարակեց ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-բարտուղար, ակադեմիկոս Մ. Դ. Ներսիսյանը։

Այնուհետև հոբելյարին ողջույնի խոսքեր ասացին համալսարանի քիմիական ֆակուլտետի դեկան Կ. Խաչատրյանը, պատմության ֆակուլտետի դոցենտ Ա. Ներսիսյանը, ուսանող Ս. Խանումյանը, ԳԱ պատմության ինստիտուտի դիրեկտոր, պատմական գիտությունների դոկտոր Դ. Գալոյանը, Խ. Աբովյանի անվան Հայկական մանկավարժական ինստիտուտի ռեկտոր Վ. Համազասպյանը, ՍՄԿՊ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի դիրեկտոր, ԳԱ թղթակից-անդամ Ծ. Ալպայանը, հանրապետության արխիվային վարչության պետ Ա. Հարությունյանը, Վ. Բրյուսովի անվան ռուսական մանկավարժական ինստիտուտի պրոռեկտոր Հ. Հակորյանը, ակադեմիկոսներ Աշ. Հովհաննիսյանը և Ս. Երեմյանը, մանկավարժ Խ. Նազարյանը, բանաստեղծ Դ. Գրիգոր։

Վերջում հրապարակվեցին հոբելյարի հասցեին ուղարկված ողջույնի հեռագրերը։

Ա. ՍԱՌԱՂՅԱՆ